ՏԵՂԱԿԱՆ ԲՈՒՅՍԵՐ՝ Անտառային ծառայությունը պահպանում և վերականգնում է տեղական բույսերը: Դրանք ներառում են վայրի ծաղիկներ, խոտեր, թփեր և ծառեր, որոնք հանդիպում են ազգային անտառներում և խոտածածկ տարածքներում և դրանցից դուրս:

Ի՞ՆՉ ԵՆ ԴՐԱՆՔ:

Տեղական բույսերը հազարավոր տարիներ շարունակ աճել են բնական միջավայրում:

ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ԴՐԱՆՔ ԿԱՐԵՎՈՐ:

- Տեղական բույսերը սնունդ (նեկտար, ծաղկափոշի, սերմեր, մրգեր) և ապաստան են տալիս տեղի կենդանիներին և միջատներին:
- Դրանց տերևները մաքրում են օդը և արտադրում թթվածին:
- Դրանց արմատները պահում են հողը և խնայում ջուրը:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ. Տեղական բույսերը տարածելու եղանակներից մեկը սերմերի գնդիկներ տնկելն է. հողի, կավի և սերմերի խառնուրդ: Պատկերացրեք, որ դուք հենց տնկել եք չորս սերմերի գնդիկ: Ի՞նչ եք կարծում, ինչպիսի՞ն կլինեն տեղական բույսերը: Ներքևում գտնվող սերմերի գնդիկներից նկարեք տեղական բույսեր:



ՀԱՐՑԵՐ

- Ինչպե՞ս կարող են կենդանիները կամ միջատներն օգտագործել այս տեղական բույսերը:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ են սերմերի գնդիկները օգտագործվում տեղական սերմեր տնկելու համար:

USDA-ը (ԱՄՆ Գյուղատնտեսության դեպարտամենտ) հավասար հնարավորություններ տրամադրող մատակարար, գործատու և փոխատու է:

Անտառային ծառայություն (Forest Service)
ԱՄՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ (U.S. DEPARTMENT OF AGRICULTURE)
Խաղաղ օվկիանոսի հարավ-արևմտյան շրջան | 2022 թ. հունիս

ՍԵՐՄԵՐԻ ԳՆԴԻԿԻ ԲԱՂԱԴՐԱՏՈՄՍ Օդով չորացած կավ

Ստացվում է 1 սերմնագնդիկ

Ցանկանո՞ւմ եք օգնել տարածել տեղական բույսերը և դիտել դրանց աճը: Կեղտոտե՛ք ձեր ձեռքերը և տնկե՛ք սերմերի գնդիկներ:

ՆՅՈՒԹԵՐ

- Ծաղիկների համար հող
- Օդով չորացած կավ (ամբողջովին բնական և ոչ թունավոր)
- Տեղական բույսերի սերմեր
- Ջուր
- Չափման գդալ (1 թեյի գդալ)
- Հարթ մակերես չորացման համար

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Կավից մի փոքր կտոր գնդիկ ձևավորեք (մոտ 1 թեյի գդալ չափով):
2. Կավը նրբաբլիթի պես հարթեցրեք: Յուրաքանչյուր կողմում ավելացրեք մի փոքր քանակությամբ ջուր:
3. Հարթեցրած կավին ավելացրեք 2-3 թեյի գդալ հող և խառնեք: Խառնուրդը պետք է նման լինի թխվածքաբլիթի խմորին: Ավելացրեք ավելի շատ ջուր, եթե այն չափազանց չոր է:
4. Կրկին հարթեցրեք գնդիկը և խառնեք 3-4 բույսի սերմերը:
5. Ձևավորեք սերմերի գնդիկ՝ գլորելով այն ձեր ձեռքերում, այն պետք է լինի մեծ մարմարի կամ մաստակի չափսով (1-ից 1,5 դյույմ տրամագծով):
6. Գնդիկը դրեք հարթ մակերեսի վրա և թողեք, որ այն չորանա 24 ժամ:
7. Այժմ սերմերի գնդիկը պատրաստ է տնկելու: Այն կարելի է տնկել մերկ հողում, այգու մարգիկում կամ ծաղկամանի մեջ: Մեղմորեն սեղմեք այն հողի մեջ, որպեսզի ներքևի կեսը լինի հողի մեջ, իսկ վերին կեսը՝ օդի ազդեցության տակ:
8. Ջրեք հաճախակի կամ այնքան, որքան անհրաժեշտ է կոնկրետ բույսի համար: Դուք կարող եք նաև սերմերի գնդիկը տնկել այնպիսի վայրում, որտեղ այն կջրվի բնական ձևով:
9. Ժամանակի ընթացքում վայելե՛ք՝ դիտելով տեղական բույսի աճը:

USDA-ը (ԱՄՆ Գյուղատնտեսության դեպարտամենտ) հավասար հնարավորություններ տրամադրող մատակարար, գործատու և փոխատու է:

ՍԵՐՄԵՐԻ ԳՆԴԻԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ. Լրացուցիչ ռեսուրսներ և ՀՏՀ

Ի՞նչ են սերմերի գնդիկները: Ինչո՞ւ են դրանք օգտագործվում սերմեր տնկելու համար:

- Սերմերի գնդիկը հողի, կավի և սերմերի խառնուրդ է, որն օգտագործվում է տեղական բույսերը տարածելու համար:
- Սերմերի գնդիկները պաշտպանում են սերմերը և պահում դրանք մեկ տեղում, մինչև աճի համար բավարար ջուր ստանան, սովորաբար անձրևների ժամանակ: Կավն ու հողը պաշտպանում են սերմերն ուժեղ քամիներից և արևի շոգից: Բացի այդ, կոշտ կավե պատյանը կարող է հետ պահել կենդանիներին սերմերը ուտելուց:

Ինչպե՞ս կարող եմ սերմերից գնդիկներ պատրաստել:

- Հիմնական հրահանգների համար կարդացեք գործողության թերթիկները:
- Դիտեք Անտառային ծառայության տեսանյութը՝ «How to Make Seed Balls» (Ինչպես պատրաստել սերմերի գնդիկներ)

  https://vimeo.com/721113038

Ի՞նչ տեսակի սերմեր պետք է օգտագործվեն սերմերի գնդիկների համար:

- Օգտագործեք ձեր տարածքի տեղական սերմեր: Տեղական բույսերը սնունդ և բնակավայր են ապահովում տեղական կենդանիների և միջատների համար:
- Իմացեք ավելին տեղական սերմերի առավելությունների մասին.
  - *www.audubon.org/content/why-native-plants-matter*
  - *www.fs.fed.us/wildflowers/Native_Plant_Materials/Native_Gardening*
- Փորձեք օգտագործել տեղական աղբյուրները տեղական բույսերի սերմերի համար, օրինակ՝ այն ընկերություններից, որոնք մասնագիտացած են տեղական սերմերում: Գտեք ձեր նահանգի տեղական բույսերի հասարակությունը և նրանց առաջարկությունները տեղական սերմերի աղբյուրների համար՝ *www.fs.fed.us/wildflowers/links.shtml*.

Ի՞նչ տեսակի կավ կարող եմ օգտագործել սերմերի գնդիկ պատրաստելու համար: Ո՞րը պետք է ընտրեմ:

- Սերմերի գնդիկները պատրաստելու երկու եղանակ կա՝ փոշիացված խեցեգործական կավով կամ օդով չորացած կավով: Եթե օգտագործում եք օդով չորացած կավ, համոզվեք, որ կավը լիովին բնական է և ոչ թունավոր: Յուրաքանչյուր տարբերակ ունի սերմերի գնդիկներ պատրաստելու իր հրահանգները:
- **Փոշիացված խեցեգործական կավ.** իդեալական մեթոդ համայնքի կամ շրջակա միջավայրի վերականգնման ավելի լայնածավալ նախագծերի համար: Փոշիացված խեցեգործական կավը կարելի է մեծ քանակությամբ գնել 50 ֆունտով, որը կարող է տատանվել 60 ԱՄՆ դոլարից մինչև 90 ԱՄՆ դոլար:
- **Օդով չորացած կավ.** իդեալական մեթոդ ավելի փոքր դասասենյակների, բակի կամ ծաղկամանների նախագծերի համար: Այս տարբերակը հեշտ է գտնել խանութներում և ավելի քիչ աշխատատար է, քան փոշիացված խեցեգործական կավի օգտագործումը: Օդով չորացած կավե նյութերը կարող են արժենալ 7 ԱՄՆ դոլարից մինչև 20 ԱՄՆ դոլար 5 ֆունտ պարկի համար (մոտ 50 սերմերի գնդիկ պատրաստելու համար):

USDA-ը (ԱՄՆ Գյուղատնտեսության դեպարտամենտ) հավասար հնարավորություններ տրամադրող մատակարար, գործատու և փոխատու է:

Հնարավո՞ր է սերմերի գնդիկների համար չպնդացող մոդելային կավ օգտագործել:

- Ոչ, չպնդացող մոդելային կավը չի կարող օգտագործվել սերմերի գնդիկների համար: Մոդելավորման կավը պարունակում է մոմ և յուղի վրա հիմնված բանաձև, որը դիմադրում է ջրին: Յուղի և մոմի հատկությունների պատճառով մոդելային կավը ճիշտ չի քայքայվում, որպեսզի սերմերը բողբոջեն:

Որտե՞ղ և ե՞րբ եմ տնկում սերմերի գնդիկները:

- Սերմերի գնդիկները տնկեք մերկ հողի մեջ, այգու մարգիկում կամ ծաղկամանի մեջ:
- Սերմերի գնդիկները տնկեք ավելի ցուրտ և անձրևոտ եղանակներին:



USDA-ը (ԱՄՆ Գյուղատնտեսության դեպարտամենտ) հավասար հնարավորություններ տրամադրող մատակարար, գործատու և փոխատու է: